ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Հասմիկ Տիգրանյանի և Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանի Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձինք՝ Հասմիկ Տիգրանյան, Տաթևիկ Խաչատրյան:

Գործուղված անձանց զբաղեցրած պաշտոնը՝ Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2023 թվականի հունվարի 22-ից 26-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ Որպես կառավարական փորձագետներ՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) կիրարկման վերանայման մեխանիզմի շրջանակներում Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների գնահատման (այուհետ՝ Գնահատում) շրջանակներում փորձագիտական-աշխատանքային այց:

Քննարկված թեմաները՝ Քննարկվել են Կոնվենցիայի II գլխով (կանխարգելման միջոցներ), Կոնվենցիայի II գլխի 14-րդ հոդվածով (փողերի լվացման կանխարգելման միջոցներ), Կոնվենցիայի V-րդ գլխով (ակտիվների վերադարձ) սահմանված միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված

միջոցառումների, օրենսդրական փոփոխությունների և իրավակիրառ փորձին առնչվող հարցերը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Հասմիկ Տիգրանյանը և Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Տաթևիկ Խաչատրյանը, ովքեր միաժամանակ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի համապատասխանությունը գնահատող կառավարական փորձագետներ են ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակում և տվյալ պահին հանդիսանում են Իրանի Իսլամական Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի համապատասխանությունը գնահատող փորձագիտական խմբի անդամ-փորձագետներ, Իրանի Իսլամական Հանրապետության գնահատման շրջանակներում ուսումնասիրել են Իրանի Իսլամական Հանրապետության կողմից ներկայացված ինքնագնահատման հարցաշարը, իրականացրել են Իրանի Իսլամական Հանրապետության կողմից ներկայացված օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծություն և համադրություն, մշակել են գնահատման/վերանայման զեկույցի (այսուհետ նաև՝ Իրանի Իսլամական Հանրապետության վերաբերյալ զեկույց) նախագիծը:

Այցի շրջանակներում Հասմիկ Տիգրանյանը և Տաթևիկ Խաչատրյանը հանդիպումներ են ունեցել Իրանի Իսլամական Հանրապետության գործադիր, օրենսդիր և դատական իշխանության, իրավապահ մարմինների ներկայացուցիչների, ոլորտային քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քննարկվել է Իրանի Իսլամական Հանրապետության Գնահատման վերաբերյալ զեկույցի նախագիծը: Կոնվենցիայի II գլխով (կանխարգելման միջոցներ), Կոնվենցիայի II գլխի 14-րդ հոդվածով (փողերի լվացման կանխարգելման միջոցներ), Կոնվենցիայի V-րդ գլխով (ակտիվների վերադարձ) սահմանված միջազգային պարտավորությունների

կատարմանն վերաբերյալ հնչեցված Հասմիկ Տիգրանյանի և Տաթևիկ Խաչատրյանի մասնագիտական հարցադրումներին տրվել են պատասխաններ և մեկնաբանություններ, ներկայացվել են Իրանի Իսլամական Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրության և մարմինների առանձնահատկությունները, պետական գնումների և պետական բյուջեի ձևավորման ընթացակարգերը, ներկայացվել են մասնավոր ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նպատակով իրականացվող աշխատանքները, ներկայացվել է Իրանի Իսլամական Հանրապետության սահմանադրահիրավական կարգավիճակը, գործադիր, դատական և օրենսդիր իշխանությունների հարաբերակցությունը և վերջիններիս կողմից հակակշիռների և զսպումների ապահովման մեխանիզմները, դատական իշխանության մարմինների անկախության ապահովման ուղղությամբ սահմանված ընթացակարգերը, պատգամավորների, դատավորների, դատախազների, քննիչների, հանրային ծառայողների, կարգապահական վարույթների հարուցման հիմքերը և համապատասխան ընթացակարգերը, վերջիններիս վարքագծի կանոնների մեկնաբանությունները:

Որպես Կոնվենցիայի վերանայման մեխանիզմի փորձագետներ՝ Հասմիկ Տիգրանյանը և Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել են իրենց եզրահանգումները Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Կոնվենցիայիով սահմանված պարտավորությունների վերաբերյալ, ներկայացրել առաջարկություններ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման ուղղությամբ:

Հասմիկ Տիգրանյանի և Տաթևիկ Խաչատրյանի կողմից հնչեցված հարցերը վերաբերել են բացառապես Իրանի Իսլամական Հանրապետության իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի մեկնաբանմանը, Իրանի Իսլամական Հանրապետության պետական մարմինների գործառույթներին և դրանց կառուցվածքին՝ համաձայն Կոնվենցիայի վերանայման մեխանիզմի սահմանված ընթացակարգի[1]:

[1] https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/ReviewMechanism-BasicDocuments/Mechanism for the Review of Implementation - Basic Documents - E.pdf , էջ 10.

Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարության հակակոռուպցիոն ոլորտը համակարգող փոխնախարարը հանդես է եկել կոռուպցիայի դեմ պայքարում համագործակցելու և փորձի փոխանակման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ համագործակցության հուշագիր կնքելու առաջարկով:

ՀՀ արդարադատության նախարարության
հակակոռուպցիոն քաղաքականության
մշակման և մոնիթորինգի վարչության
մոնիթորինգի բաժնի պետ՝

Հասմիկ Տիգրանյան

31.01.2023թ.